Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ գործով ներկայացված բավարար վերաբերելի և թույլատրելի ապացույցներով հաստատվում են հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգն օրենքով սահմանված պահանջների խախտմամբ իրականացված լինելու և հայցվորի իրավունքները խախտված լինելու փաստերը, ուստի հայցը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Դատական ծախսեր.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են՝ գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները:

ԱՁ Անետա Սարգսյանի՝ որպես հանձնակատար, և «Մեգիէլ» ՍՊ ընկերության՝ ի դեմս տնօրեն Ս.Փարիզյանի՝ որպես հանձնարարող միջև 11.04.2023թ. կնքված իրավաբանական օգնություն ցույց տալու հանձնարարության վերաբերյալ թիվ 2023/04-01 պայմանագրի համաձայն՝ Հանձնակատարը պարտավորվել է Հանձնարարողի անունից և նրա հաշվին կազմակերպել պայմանագրի 1.2 կետում նշված «Մեգիէլ» ՍՊ ընկերության շահերի պաշտպանությունը, իսկ Հանձնարարողը պարտավորվել է վճարել դրա համար: Պայմանագրի 3.1 համաձայն՝ պայմանագրի 1.2 կետով սահմանված հանձնարարության արժեքը կազմում է 200.000 ՀՀ դրամ:

Տվյալ դեպքում, փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը /ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը/, գործի բարդությունը:

Դատարանը, վերոնշյալ պատճառաբանությամբ, գտնում է, որ տվյալ քաղաքացիական գործով հայցվորի՝ փաստաբանի վարձատրության խելամիտ գումար է հանդիսանում 100.000 ՀՀ դրամը, ուստի այդ գումարը, պետք է բռնագանձել պատասխանողից հօգուտ հայցվորի:

Անդրադառնալով պետական տուրքի գումարին և նկատի ունենալով, որ հայցվորը նախապես վճարել է պետական տուրքի գումարը, հայցը բավարարվել է, ուստի դատարանը գտնում է, որ այն պետք է բռնագանձել պատասխանողից հօգուտ հայցվորի:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-192-րդ, 234.12-րդ հոդվածներով, Դատարանը.

ՎՃՌԵՑ

Հայցը բավարարել:

Անվավեր ճանաչել «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենի՝ 07.04.2023թ. թիվ ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/30/1 որոշումը:

Պատասխանող «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից հօգուտ «Մեգիէլ» ՍՊ ընկերության բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Պատասխանող «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից հօգուտ «Մեգիէլ» ՍՊ ընկերության բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԴԱՏԱՎՈՐ **Գ.ՄԱՋՄԱՆՅԱՆ**

Ծանոթություն. Վճիռն օրինական ուժի մեջ է մտել՝ 31.05.2023թ.:

ԴԱՏԱՎՈՐ **Գ. ՄԱՋՄԱՆՅԱՆ**